

# Գեղարքունիքի մարզը նախապատրաստվում է համապետական շաբաթօրյակին

13.07.2017

Հուլիսի 13-ին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանն անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն, Գեղարքունիքի մարզպետի համապատասխան կարգադրությամբ մարզում ստեղծված «Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման մշտական հանձնաժողովի անդամների մասնակցությամբ: Խորհրդակցությանը հրավիրված էին նաև մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլդաթյանը: Մարզպետի տեղակալը ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի անդամներից, հունիսի 30-ին մարզում սանիտարական մաքրման ուղղությամբ կազմակերպված միջոցառումը բարձր մակարդակով իրականացնելու համար, նշելով, որ յուրաքանչյուրի պարտքն է մաքուր պահել իր բակը, տունը, համայնքը, շրջապատը, քաղաքն ու երկիրը: Ըստ Անդրանիկ Հակոբյանի՝ արդեն տեսանելի է, որ նմանատիպ միջոցառումներն աստիճանաբար մարդկանց մեջ ձևավորում են շրջապատը մաքուր պահելու մշակույթ: Այնուհետև Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան գրությունից բխող հանձնարարականները՝ 2017 թվականի հուլիսի 29-ին նախատեսվող համապետական շաբաթօրյակի կազմակերպման և արդյունավետ իրականացման վերաբերյալ: Հանձնաժողովի անդամները հերթական անգամ ստացան հանձնարարականներ, իրենց վերահսկողությամբ գործող կազմակերպություններին համապետական շաբաթօրյակի մասին իրազեկելու և համատեղ նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ: հանձնաժողովի անդամներին հանձնարարվեց նաև նախատեսվող աշխատանքների կազմակերպման մասին սեղմ ժամկետում ներկայացնել տեղեկատվություն՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն նախատեսված ժամկետում ներկայացնելու նպատակով: